Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2020 թվականի նոյեմբերի 27-ի N 488-L որոշմամբ
Գործում է սկսած 2020 թվականի դեկտեմբերի 1-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+37410) 59 33 33 , (+37460) 27 33 33 հեռախոսահամարներով:

ԱՐԱԳ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ընդհանուր պայմաններ			
1.	Վարկատեսակ		վարկային գիծ
2.	Նպատակ		սպառողական
3.	Արժույթ		ՀՀ դրամ
4.	Նվազագույն գումար		100 000
5.	Վարկի առավելագույն գումար	Վարկային պատմություն ունեցող հաճախորդներ[1]	3 000 000
		Վարկային պատմություն չունեցող հաճախորդներ	գրանցված զուտ եկամտի (աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ) քառապատիկ
6.	Տարեկան անվանական տոկոսադրույք	Վարկային պատմություն ունեցող հաճախորդներ[1]	17% - 20.7%
		Վարկային պատմություն չունեցող հաճախորդներ	20.7%
7.	Տարեկան փաստացի տոկոսադրույք[2]	Վարկային պատմություն ունեցող հաճախորդներ	19,31% - 23,97%
		Վարկային պատմություն չունեցող հաճախորդներ	23,75%-23.97%
8.	Նվազագույն ժամկետ (ամիս)		18
9.	Առավելագույն ժամկետ[1]		36 ամիս
10.	Չօգտագործված միջոցների դիմաց տոկոս		չի հաշվարկվում

[1] **Վարկային գծի առավելագույն գումարը, ժամկետը որոշվում են համաձայն հաճախորդի վարկարժանության գնահատականի**

[2] ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

11.	Տրամադրման եղանակ	անկանխիկ՝ վճարային քարտի միջոցով
12.	Վարկային գծի մարման ամսական նվազագույն չափ	10%
13.	Վարկային գծի մարման արտոնյալ ժամանակահատված	մինչև 45 օր նախորդ ամսվա ընթացքում վարկային գծի անկանխիկ օգտագործված գումարների նկատմամբ *(բացառությամբ քարտից քարտ փոխանցումների, ներբանկային և միջբանկային փոխանցումները ՀՀ տարածքում և սեփական հաշիվների միջև)* տոկոսներ չեն հաշվարկվում, եթե հաճախորդը վերը նշված եղանակով վարկային գծի օգտագործված մասի մարումը կատարում է մինչև ընթացիկ ամսվա 15-ը
14.	Վարկային գծի և տոկոսագումարների մարման եղանակ	ամենամսյա պարտադիր մուտք քարտային հաշվին նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ օգտագործված գումարի՝ 12-րդ կետում նշված %-ի և կուտակված տոկոսագումարների հանրագումարի չափով՝ մինչև ընթացիկ ամսվա 15-ը, իսկ վարկային գծի մարումը՝ ժամկետի վերջում
15.	Ապահովվածություն	1) վարկարժանության գնահատական, 2) դրամական հոսքեր 3) ֆիզիկական անձի երաշխավորություն՝ անհրաժեշտության դեպքում
Միջնորդավճարներ		
16.	Հայտի ուսումնասիրության վճար	չի սահմանվում
17.	Տրամադրման միանվագ միջնորդավճար	չի սահմանվում
18.	Ամսական սպասարկման վճար	չի սահմանվում
19.	Վճարային քարտի տեսակ	➢ **Visa Classic կրեդիտային քարտ**, որի սակագները սահմանվում են հավելված 2.1-ով կամ ➢ **Idram Rocket Visa** քոբրենդային քարտ՝ համաձայն գործող սակագների՝ հետևյալ հղմամբ՝ Idram Rocket VISA Տեղեկատվական ամփոփագիր
Վարկառուի/երաշխավորի նկատմամբ պահանջներ		
20.	Կարգավիճակ	ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձ
21.	Տարիքային սահմանափակում	վարկառուի/երաշխավորի տարիքը վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ չպետք է 21 տարեկանից ցածր լինի և մինչև վարկի մարման վերջնաժամկետը չպետք է գերազանցի 65 տարեկանը
22.	Վարկառուի/երաշխավորի վարկային պատմության նկատմամբ պահանջ	➢ հաճախորդը պետք է ունենա դրական վարկային պատմություն կամ ➢ վարկի տրամադրման նախորդող առնվազն վեց ամսվա ընթացքում հաճախորդը պետք է լինի գրանցված աշխատող, եթե վերջինս չունի վարկային պատմություն
Տույժեր, տուգանքներ		

23.	Ժամկետանց վարկային գծի նկատմամբ, օրական	0.1%
24.	Ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ, օրական	0.1%
25.	Վաղաժամկետ մարման տույժ	չի սահմանվում
26.	Վարկային գծի վաղաժամկետ մարում պահանջելու հիմքեր	Բանկն իրավասու է պահանջել վարկային գծի վաղաժամկետ մարում, եթե՝ 1) հաճախորդը հրաժարվում է վճարային քարտից, 2) վարկային գծի ստացման համար ներկայացված տեղեկությունները կեղծ կամ անարժանահավատ են, 3) չի կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները, 4) այլ հիմքեր՝ համաձայն պայմանագրի
Հայտի վերաբերյալ այլ պայմաններ		
27.	Վարկային գծի տրամադրման դրական գործոններ	1) դրական վարկային պատմություն. 2) բավարար դրամական հոսքեր 3) վարկարժանության դրական գնահատական
28.	Վարկային գծի մերժման գործոններ	1) բացասական վարկային պատմություն 2) անբավարար դրամական հոսքեր 3) վարկարժանության բացասական գնահատական, 4) կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրում, 5) այնպիսի տեղեկատվության տրամադրում, որը կասկածի տակ է դնում վարկային գծի վերադարձելիությունը 6) հաճախորդի էլեկտրոնային փոստի բացակայություն 7) այլ գործոններ
29.	Որոշման կայացման առավելագույն ժամկետ	1 աշխատանքային օր
30.	Վարկառուին վարկային գծի վերաբերյալ կայացված որոշման մասին տեղեկատվության տրամադրման ժամկետ	1 աշխատանքային օր Բանկը վարկի տրամադրման վերաբերյալ կայացրած որոշման մասին հաճախորդին կարող է տեղեկացնել Բանկի տարածքում, հեռախոսազանգի կամ էլեկտրոնային փոստի միջոցով:
31.	Որոշման վավերականության առավելագույն ժամկետ	15 աշխատանքային օր, ընդ որում, նշված 15 աշխատանքային օրվա ընթացքում վարկային գիծը չձևակերպելու/չտրամադրելու դեպքում թույլատրվում է առավելագույնը մինչև հաջորդող 3-րդ աշխատանքային օրը իրականացնել հաճախորդի լրացուցիչ ԱՔՌԱ հարցում (առանց հաճախորդի կողմից նոր դիմում և/կամ ԱՔՌԱ հարցում անելու համաձայնություն պահանջելու) և նորից հաստատել՝ վերահաստատել վարկային գիծը, եթե հաճախորդը տվյալ պահին չունի ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ: Արգելվում է մեկից ավել վերահաստատումը:

32.	Դիմումի ընդունման, ձևակերպման և տրամադրման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր կամ առցանց՝ հավելվածի միջոցով
Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող փաստաթղթեր և տեղեկատվություն		
1.	Հաճախորդի/երաշխավորի անձը հաստատող փաստաթուղթ	
2.	Սոցիալական քարտ/հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք	
3.	Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցե	

Հավելված 2.1

Visa Classic կրեդիտային քարտերի սակագներ և պայմաններ

	Ծառայություններ	Visa Classic
1.	Քարտի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար
2.	Քարտի թողարկում 2-5 բանկային օրվա ընթացքում[3]	անվճար
3.	Քարտի գործողության ժամկետ	5 տարի
4.	Քարտի շտապ տրամադրում[4]մեկ բանկային օրվա ընթացքում	5,000 ՀՀ դրամ
5.	Քարտային հաշվի սպասարկման տարեկան վճար	անվճար
6.	Քարտային հաշվի չնվազող մնացորդ	չի սահմանվում
7.	Քարտային հաշվի դրական մնացորդին հաշվարկվող տարեկան պարզ տոկոսադրույք	0%
8.	Վնասված, շահագործման ոչ ենթակա, կորցրած, գողացված քարտի կամ PIN կոդի դեպքում քարտի կրկնօրինակի տրամադրում գործողության նույն ժամանակահատվածով	2,000 ՀՀ դրամ
9.	Ժամկետը լրացած քարտերի վերաթողարկում	անվճար
10.	Քարտի արգելափակում	անվճար
11.	Քարտի ապաարգելափակում	անվճար

[3] **Քարտի ակտիվացումը կատարվում է համաձայն Բանկի «Վճարային քարտերի սպասարկման» կանոնների (այսուհետ տեքստում՝ Կանոններ)՝ հետևյալ հղմամբ՝ Կանոններ**

[4] **Քարտի շտապ տրամադրումն իրականացվում է միայն Բանկի Վարդանանց մասնաճյուղում: Հասցե. ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13, հեռախոսահամարներ՝ (+37410) 59 33 33, (+37460) 27 33 33**

	Ծառայություններ	Visa Classic
12.	Քարտի մուտքագրումը միջազգային STOP ցանկ (7 օրով մեկ տարածաշրջանում)	10,000 ՀՀ դրամ
13.	Քարտային հաշվի քաղվածքի ամենամսյա տրամադրում Բանկում կամ փոստի, էլ.փոստի միջոցով	անվճար
14.	Քարտային հաշվի քաղվածքի լրացուցիչ տրամադրում Բանկում կամ փոստի, էլ.փոստի միջոցով[5]	1,000 ՀՀ դրամ
15.	Վճար յուրաքանչյուր SMS-ի համար	անվճար
16.	Քարտային հաշվի համալրում	անվճար
17.	Միջնորդավճար քարտով Բանկի բանկոմատներից կանխիկի տրամադրման համար	0.5%
18.	Միջնորդավճար Բանկի կանխիկացման կետերից (POS տերմինալ) կանխիկի տրամադրման համար	0.5%
19.	Առանց քարտի օգտագործման քարտային հաշվից Բանկի կանխիկացման կետերից կանխիկացում	ըստ համապատասխան քարտատեսակի Բանկի կանխիկացման կետերից (POS տերմինալ) կանխիկի տրամադրման համար սահմանված միջնորդավճարի
20.	Միջնորդավճար ԱրՔա համակարգի այլ բանկերի կանխիկացման կետերից կանխիկի տրամադրման համար	1%
21.	Միջնորդավճարը քարտով ԱրՔա համակարգի անդամ չհանդիսացող և արտերկրի բանկերի ԱԳՄ - ներից և կանխիկացման կետերից կանխիկի տրամադրման համար	1.5%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ
22.	Միջնորդավճար քարտից քարտ կատարվող փոխանցումների համար (բանկոմատների և վիրտուալ քարտի միջոցով)	0.5%
23.	Միջնորդավճար քարտով կատարվող անկանխիկ գործարքների իրականացման համար	անվճար
24.	Կանխիկացման օրական սահմանաչափ	5,000,000 ՀՀ դրամ, 10,000 ԱՄՆ դոլար
25.	Կանխիկացման գործարքների օրական քանակը	10 հատ
26.	Միջնորդավճար սահմանաչափերի ժամանակավոր կամ մշտական վերանայման համար	1,000 ՀՀ դրամ
27.	Քարտային հաշվի փակում և քարտի վերադարձ	անվճար

Ընդհանուր պայմաններ

[5] Քաղվածքի տրամադրումը ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս իրականացվում է հաճախորդի քարտային հաշվին փոստային ծառայության և Բանկի համապատասխան սակագների հանրագումարի առկայության դեպքում:

1. Բանկի քարտերը հաշվարկային են և նախատեսված են Քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում կանխիկացման, կանխիկի մուտքագրման և անկանխիկ գործառնություններ/գործարքներ իրականացնելու համար՝ Քարտապանի քարտային հաշվում առկա դրամական միջոցների և Բանկի կողմից տրամադրված վարկային գծի/օվերդրաֆտի հաշվին:
2. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
3. Կազմակերպությունների հետ աշխատավարձային քարտերի տրամադրման և սպասարկման սակագները սահմանվում են առանձին՝ համապատասխան պայմանագրերով:
4. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը՝ դրանք ուժի մեջ մտնելուց 15 օր առաջ հրապարակելով Բանկի պաշտոնական կայքում:
5. Քարտային հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոսները վճարվում են ամսական հաճախականությամբ:
6. Քարտային հաշվի գումարի նկատմամբ տոկոսները հաշվեգրվում են գումարը մուտքագրելու հաջորդ օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ հաճախորդի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
7. Բանկին վերապահված է հաշվում եղած դրամական միջոցների դիմաց ստացված տոկոսներից օրենքով սահմանված կարգով եկամտահարկը (10%) հաշվելու և վճարելու հարկային գործակալի իրավունք:
8. SMS հաղորդագրության և էլեկտրոնային հասցեի ակտիվացման համար անհրաժեշտ է այցելել (անձը հաստատող փաստաթղթով) Բանկի ցանկացած մասնաճյուղ և լրացնել համապատասխան դիմում-հայտը:
9. Քարտը հաճախորդին տրամադրվում է քարտի տրամադրման դիմումը Բանկ ներկայացնելուց և սպասարկման պայմանագիրը ստորագրելուց հետո 2-5 բանկային օրվա ընթացքում:
10. Քարտի հետ հաճախորդին տրամադրվում է նաև հատուկ ծածկագիր (PIN-կոդ) պարունակող ծրար: PIN-կոդը պետք է օգտագործի միայն հաճախորդը, ինչպես նաև հաճախորդը պարտավոր է ապահովել PIN-կոդի հասանելիության անհնարինությունը այլ անձանց: Խորհուրդ չի տրվում PIN կոդը պահպանել քարտի հետ միասին:
11. Բանկի կողմից Քարտն ակտիվացվում է Քարտը և PIN կոդը Քարտապանի կողմից ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:
12. Քարտի ժամկետի ավարտման դեպքում քարտի վերաթողարկումը կատարվում է Քարտապանի համաձայնությամբ՝ քարտի վերաթողարկման դիմումը Բանկ ներկայացնելուց 2-5 բանկային օրվա ընթացքում:
13. Քարտով գործարքները հնարավոր է իրականացնել ինչպես քարտային հաշվի արժույթով, այնպես էլ քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով՝ տվյալ գործարքի օրվա համար Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
14. Գործարքի գումարը քարտային հաշվի արժույթի փոխարկելու արդյունքում փոխարժեքների տարբերությունից առաջացած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:
15. Բոլոր միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով: Արտարժութային քարտերի համար սահմանված միջնորդավճարները գանձվում են տվյալ գործարքի օրվա համար Բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեքով:
16. Քարտային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
17. Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
18. Բանկի և հաշվետիրոջ միջև վարկային պարտավորությունների առկայության դեպքում քարտային հաշվից դրամական միջոցները անակցեպտ գանձվում են վարկային պայմանագրով նախատեսված կարգով:
19. Հաշվի քաղվածքը ստանալուց 15-օրյա ժամկետում հաշվի հետ կապված գործառնություններում անճշտություններ հայտնաբերելու դեպքում հաճախորդը Բանկին կարող է ներկայացնել բողոքարկում: Նշված ժամանակահատվածում բողոքարկումները չստանալու դեպքում Բանկը քաղվածքը համարում է ընդունված: Բողոքարկումը ներկայացվում է Բանկին գրավոր դիմումի տեսքով: Սահմանված ժամկետում ստացված բողոքարկման դիմումը Բանկն ընդունում է կատարման՝ իրականացնելով տեղական և միջազգային վճարային համակարգի կանոններով սահմանված համապատասխան գործողությունները:
20. Քարտի կորստի դեպքում հաճախորդը պետք է հնարավորինս սեղմ ժամկետում հեռախոսակապի միջոցով կամ այլ հնարավոր եղանակով տեղյակ պահի.
    - **«Արմենիան Քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնին (+37410) 59 22 22 շուրջօրյա հեռախոսահամարով կամ**
    - **զանգահարի Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն (+37410) 59 33 33 հեռախոսահամարով. 24/7 ռեժիմով կամ**
    - **անձնագրով այցելի Բանկի ցանկացած մասնաճյուղ**

    Հաճախորդի կողմից քարտի կորստի մասին հեռախոսակապի միջոցով հայտնելու պահին քարտով գործարքների իրականացումը անմիջապես կկասեցվի:

    Բանկը պատասխանատվություն չի կրում քարտապանին հասցրած այն վնասի համար, որը կատարվել է քարտը կորցնելու և Բանկ հայտնելու միջև ընկած ժամանակահատվածում: Քարտի գործողության կասեցումից հետո հաճախորդը պետք է այցելի Բանկ և ներկայացնի քարտի կորստի մասին գրավոր դիմում, որի հիման վրա Բանկը հաճախորդին 2-5 բանկային օրվա ընթացքում կտրամադրի նոր քարտ: Մանրամասն տես Բանկի «Վճարային քարտերի սպասարկման կանոններում»՝ հետևյալ հղմամբ՝ **Կանոններ:**
21. Ժամկետից շուտ քարտի սպասարկումը դադարեցվում և քարտային հաշիվը փակվում է քարտատիրոջ գրավոր դիմումի համաձայն: Քարտային հաշվի մնացորդը վերադարձվում է հաճախորդին: Քարտը ենթակա է վերադարձման Բանկ:
22. Քարտը փակելուց մեկ տարվա ընթացքում հաշիվը չօգտագործելու դեպքում, եթե փակված վճարային քարտի հաշվի մնացորդը չի գերազանցում 1,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արժույթը, ապա հաշիվը փակվում է Բանկի նախաձեռնությամբ՝ գանձելով միջնորդավճար հաշվում առկա մնացորդի չափով:
23. **Ուշադրություն՝ Հաճախորդի հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա**

հաճախորդը՝ իր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝ Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ:

24. Այլ բանկերի բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացման ժամանակ սպասարկող բանկի կողմից կարող են կիրառվել հավելյալ միջնորդավճարներ:
25. Այլ բանկերի բանկոմատներից քարտից քարտ կատարվող փոխանցումների ժամանակ սպասարկող բանկի կողմից կարող է գանձվել հավելյալ միջնորդավճար:
26. Վիրտուալ միջավայրում Բանկի կողմից թողարկված վճարային քարտերով գործառնությունների իրականացման ժամանակ կիրառվում է 3D Secure տեղեկատվական անվտանգության համակարգ: Քարտով գործառնություն իրականացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վճարային համակարգերի կողմից հաստատված տարբերանշաններին (Visa-ի դեպքում Verified by Visa, Mastercard-ի դեպքում Mastercard SecureCode, ԱրՔա-ի դեպքում ArCa SecurePay): Տեխնիկական կամ Բանկի գործունեությամբ չպայմանավորված որևէ պատճառով 3D Secure անվտանգության գաղտնաբառ չստանալու և դրա արդյունքում գործարքը խափանվելու դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:
27. Վճարային քարտի ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ.

- ✓ վճարային քարտի ստացման դիմում
- ✓ անձը հաստատող փաստաթուղթ
- ✓ հանրային ծառայությունների համարանիշ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք

28. Քարտի օգտագործման, պահպանման, անվտանգության ապահովման, քարտով գործարքների բողոքարկման վերաբերյալ այլ դրույթները, որոնք սահմանված չեն սույն տեղեկատվական ամփոփագրում, սահմանված են **Կանոններով,** Բանկի կողմից վճարային քարտի թողարկման, տրամադրման և սպասարկման հետ կապված Բանկի և Քարտապանի միջև կնքվող պայմանագրով, ներքին իրավական ակտերով, և վճարահաշվարկային համակարգերի (ԱրՔա, Visa, Mastercard) կանոններով:
29. Բանկը պարտավոր է հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս վերջինիս տրամադրել Կանոնները:
30. Քարտային հաշվում առկա միջոցների վերադարձելիությունը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափով, մասնավորապես՝				
Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժու-թային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. **Բանկը, նախքան վարկային պայմանագրի կնքումը, հաճախորդին տրամադրում է վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված են հաճախորդին տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:**

2. **Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝**

հետ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան:

3. Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները:

4. Հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

5. Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:

6. Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափով կատարելու դեպքում:

7. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց:

8. Արտարժույթով վարկերի դեպքում փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է ընդունվում վարկի տրամադրման պահին ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքը: Փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

9. Արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում վարկի մայր գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարները վարկառուի ցանկությամբ կարող են վճարվել նաև վարկի արժույթով:

10. Արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

11. Տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը և/կամ դրամական միջոցները կարող են օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ հաճախորդի մասին տեղեկատվությունը Բանկը առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը: Հաճախորդը իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը:

12. Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել հաճախորդին՝ ապագայում վարկ ստանալու համար:

13. Հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում հաճախորդի այլ գույքի հաշվին:

14. Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձման ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:

15. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70 11 11, ֆաքս՝ (+37410) 58 24 21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

16. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

17. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

18. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

19. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ հետևյալ հղմամբ՝ Սակագներ:

20. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ:

21. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBanking.am առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ